ՀԱՆԴԷՍ
ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԷՍ ՎԱՏԻԿԱՆՈՒ

ՆՈՐԱԳԻՒՏ ՏԱՒԻՂ

ԸՆԾԱՅ ԱՌ Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ

Ամենայն ոք գիտէ թէ տաւիղն թէպէտ շատ անոյշ և ախորժելի գործի մ'է, բայց արդի երաժշտական գործոց շատ անյարմար՝ իր այլ և այլ անկատարութեանց պատճառաւ, որոց գլխաւորն է ձայնի փոփոխութեանց դժուարութիւնն. այնպէս՝ որ եթէ ուզենք քանի մը կիսաձայն ընդունիլ յաջորդաբար՝ անհրաժեշտ պէտք է այլ և այլ ուղղիչներ (registre) *փոփոխել, որով գործն կը դժուարանայ և տաւղահարն չի կրնար արդի երաժշտութեան ամէն նուրբ թռիչներուն հետևիլ: Ուրեմն ամենայն ոք կը փափագէր զայն դաշնամուրի դրութեան վերածել. շատ հանճարաւոր անձինք աշխատեցան, բայց 'ի զուր... Վերջապէս իտալացին Աղեքսանդր Անթոլոնի յետ տասն և ութ ամաց համբերատար աշխատութեանց և փորձերու՝ հուսկ ուրեմն յաջողեցաւ: Իր գիւտը պարզ է. ստեղնարանի ոճոյն վերածեց մասնաւոր մեքենական նոր դրութեամբ մը՝ տաւղին ամէն անհաւասար թելերն. այնպէս որ հիմա այս գիւտով ամէն դժուարութիւնք բարձան, և դաշնամուր ածողն՝ կրնայ նաև հնչեցնել զտաւիղ:*

Միլանոյ երաժշտութեան դպրոցին (Conservatorio) *տասն հռչակաւոր վարժապետք՝ Իտալիոյ տէրութեան հասարակաց կրթութեան պաշտօնէին յանձնարարութեամբ քննեցին այս նոր գիւտին առաւելութեանց իրականութիւնն, և հաստատեցին որ ճշմարիտ է: Իսկ գտնողն, որ Մանդուացի է, ազնուական մտածութեամբ իր գիւտին երախայրիքն ուզեց Սրբազան Քահանայապետին նուիրել: Արդ այս ընծայն Վատիկանեան Աշխարհահանդիսին մէջ 'ի ցոյց դրուած է, և փափագողք կրնան հոն փորձել և կամ լսել այս նոր գործիքը:*

digitised by A.R.A.R.@